

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՆՈՒՅՆԱՔԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՄԵԿՆԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Իմաստաբանական շարահյուսությունը, որը բխում է շարահյուսական կառույցների արտացոլական ունակության դրույթից, ենթադրում է, որ ցանկացած շարահյուսական կառույց նախ և առաջ կոչված է ներկայացնելու օբյեկտիվ իրականության մեջ առկա հարաբերությունների այս կամ այն տիպը: Մյուս կողմից, բնականաբար, այդ հարաբերությունների յուրաքանչյուր տիպ իր համապատասխան արտահայտությունն է գտնում որոշակի շարահյուսական կառույցում: Սույն հետազոտության բուն խնդիրը հանդիսացող նույնաբանություններն այս առումով բացատրություն չեն կազմում: Հորվածը նպատակ ունի լեզվական այս երևույթի նկատմամբ տարբեր մոտեցումների մեկնաբանմանը զուգահեռ վեր հանել նույնաբանական կառույցների հաղորդակցական-գործառական առանձնահատկությունները անգլերեն խոսքում, պարզաբանել խոսողի/գրողի կողմից դրանց կիրառման պատճառաբանվածությունը տվյալ հաղորդակցական իրադրությունում:

Բանալի քառեր. *նույնաբանություն, հաղորդակցական ներակայում, համագործակցության սկզբունք, քանակի կարգախոս, հաղորդակցական իրադրություն*

Լեզվաբանության զարգացման արդի փուլում, երբ լեզվաբանների ուշադրության կենտրոնում են խոսքի կառուցման խնդիրները և տարբեր խոսքային երևույթների իրական գործառության օրինաչափությունները, առավել կարևորվում է տեքստի միավորի ուսումնասիրությունը: Նման միավոր է նույնաբանությունը, որի մեկնաբանությանը և գործառական առանձնահատկություններին անդրարդարձ է կատարվում սույն հոդվածում: Լեզվական այս երևույթը ունի հետազոտական որոշակի պատմություն, սակայն որոշ հարցեր դեռևս մնում են պարզաբանության կարոտ հատկապես ժամանակակից լեզվաբանության նոր գաղափարների և արդիական խնդիրների հետ կապված:

Նույնաբանության առավել ընդունված բանաձևի համաձայն, եթե որևէ առարկայի, երևույթի մասին ճիշտ է ասել, որ այն X է, ապա ճիշտ է ասել, որ այն X է: Ավելի սեղմ եթե փորձենք տալ այս սահմանումն, ապա X-ը X է և հետևաբար՝ անպայմանորեն ճիշտ /Wierzbicka, 1987: 95-114/: Այս սահմանման կիրառելիությունը տեսնելու համար դիտարկենք անգլերենի նույնաբանությունների այնպիսի օրինակներ, ինչպիսիք են “Boys will be boys”, “Boys are boys”, “Kids are kids”, կամ “Business is business”: Ըստ Կալիշի և Մոնտագի նույնաբանությունը խորհրդանշանային (symbolic) նախադասություն է, որի իրական արժեքը T է ցանկացած հնարավոր նշանակյալի նկատմամբ: Օրինակ՝ P->P է նույնաբանություն է /Kalish, Montague, 1964/: Սակայն պետք է նշել, որ այնպիսի նույնաբանություններ, ինչպիսիք են “If it rains, it rains”, “War is

war”, “Boys will be boys”, “You are either with us or you’re not” և “If it happens, it happens” շատ հաճախ ներկայացվում են որպես Գրայսի հաղորդակցական ներակայման (conversational implicature) դրսևորում: Այս տեսակետին հարող լեզվաբանները գտնում են, որ նույնաբանությունները կարելի է մեկնաբանել Գրայսի քանակի կարգախոսի համաձայն: Հաղորդակցվելիս որևէ իմաստ արտահայտել նշանակում է նկատի ունենալ մի բան, որը բխում է ասվածից և հասկանալի է դառնում խոսքային իրադրության արտալեզվական գործոններից և հաղորդակցման ու համագործակցության ընդհանուր սկզբունքներից ելնելով /Grice, 1975/: Համաձայն Գրայսի առաջ քաշած տեսության Համագործակցության սկզբունքը կարգավորում է մարդկանց միջև բոլոր փոխհարաբերությունները: Խոսքային համագործակցության ընթացքում յուրաքանչյուր խոսակցի ներդրում պետք է համապատասխանի տվյալ պահին ընթացող հաղորդակցության երկուստեք ընդունված նպատակին կամ ուղղվածությանը /Grice, 1989/: Այս սկզբունքի մասը կազմող քանակի կարգախոսը հենվում է երկու հիմունքի վրա: Առաջին՝ փոխանցել այնպիսի տեղեկատվություն, որը պահանջում է տվյալ պահի հաղորդակցական նպատակը և երկրորդ՝ չփոխանցել առավել տեղեկատվություն, քան պահանջվում է: Գրայսը գտնում է, որ հաղորդակցական ներակայումը (conversational implicature) հնարավոր է դառնում, քանի որ հաղորդակցվելիս զրուցակիցները միշտ ակնկալում են, որ դիմացինը պահպանում է հաղորդակցական կարգախոսները և արտահայտվում է դրանց համապատասխան: Հենց այս պատճառով, երբ խոսողներից մեկը խախտում է կարգախոսը՝ ասելով կամ մատնանշելով, թե ասում է մի բան, որը ճիշտ չէ, տեղեկատվություն չի պարունակում, կամ հակառակը՝ չափազանց ծանրաբեռնված է տեղեկատվությամբ, չի համապատասխանում տվյալ իրադրությանը կամ անորոշ է, ապա նրա խոսակիցը, ենթադրելով, որ խոսողն իրականում ենթարկվում է կարգախոսին, փորձում է կռահել, թե իրականում ինչ կար խոսողի մտքին, և թե ինչ նա նկատի ուներ իրականում: Եվ քանի որ զրուցակիցը գիտի, որ խոսողն իրենից ակնկալում է հետևել կարգախոսին, նա իրեն թույլ է տալիս մտադրված կերպով «դուրս գալ» կարգախոսի սահմաններից, այսինքն ստեղծել տպավորություն, թե ինքը խախտում է կարգախոսն այնպես, որ դա ակնհայտ է և խոսողի, և նրա զրուցակցի համար՝ իր ներակա միտքը փոխանցելու համար (to get their implicatures across): Ստացվում է, որ համաձայն Գրայսի խոսողն ու խոսակիցը մինչ խոսակցություն սկսելը արդեն նախատրամադրված են եղել հետևելու կարգախոսներին՝ հաղորդակցական ներակայումների արտահայտման համար: Եվ հենց կարգախոսին հետևելու նախատրամադրվածության հիմքի վրա խախտվում է ընդունելի կարգախոսը, որպեսզի փոխանցվի ավելին քան ասվում է նախադասության միջոցով: Այսպիսով, քանի որ Գրայսը գտնում էր, որ կարգախոսները հատուկ չեն մեկ կամ մի քանի լեզվի, այլ համընդհանուր են, ապա նույնաբանությունները և դրանց մեկնաբանությունը նույնպես ընդհանուր կանոնների են ենթարկվում:

Պետք է նշել, որ Գրայսի մոտեցումը միանշանակ կերպով չի ընդունվել բոլոր լեզվաբանների կողմից: Այս առումով հետաքրքիր տեսակետ է արտա-

հայտում Վերծրիցկան /Wierzbicka, 2003/: Նա անհամաձայնություն է հայտնում Գրայսի այն գաղափարին, որ նույնաբանությունների արտահայտած իմաստն ու կիրառությունը պետք է հիմնվեն կոնկրետ լեզվից դուրս գործող (language-independent) և համընդհանուր սկզբունքների վրա: Սակայն, ինչպես մատնանշում է Վերծրիցկան, որոշ անգլերեն նույնաբանություններ չունեն իրենց համարժեքներն այլ լեզուներում, իսկ որոշներն էլ, թեպետ ունեն իրենց համարժեքներն ուրիշ լեզուներում, օգտագործվում են այլ իմաստ փոխանցելու նպատակով: Նույնաբանությունները լայն առումով անփոխանցելի են մի լեզվից մյուսը: Այստեղից Վերծրիցկան ենթադրում է, որ յուրաքանչյուր դեպքում, հաղորդակցական իմաստը ներփակված է տվյալ կառույցի մեջ և չի հիմնվում լեզվագործաբանական որևէ համընդհանուր կարգախոսի վրա: Վերծրիցկան գտնում է, որ նույնաբանական կառույցներն ունեն լեզվին հատուկ (language-specific) նշանակություն և որ այս նշանակությունը պետք է մեկնաբանվի համապատասխան իմաստաբանական մոտեցմամբ: Յույց տալու համար, որ նույնաբանական կառույցները լեզվին հատուկ նշանակություն ունեն ու չեն կարող մեկնաբանվել Գրայսի կարգախոսի համաձայն, համեմատություն է կատարում անգլերենի, ֆրանսերենի, ռուսերենի և գերմաներենի միջև: Վերծրիցկան անգլերեն “Boys will be boys”, նույնաբանությունը կիրառում է նշված լեզուներում ու ցույց տալիս, որ այդ լեզուներում այն կամ չի արտահայտում անգլերենում արտահայտած նշանակությունը (գերմաներեն), կամ էլ արտահայտում է կիսով չափ (ֆրանսերեն) ու այնքան էլ ընկալելի չէ, կամ էլ պահանջում է յե մասնիկ նույն նշանակությունը ռուսերենում արտահայտելու համար: Համեմատելով լեհերենի, չինարենի և ճապոներենի նույնաբանական կառույցները լեզվաբանը հանգում է այն եզրակացության, որ նույնաբանությունները լեզվին բնորոշ նշանակություն ունեն և նույնությամբ չեն անցնում մի լեզվից մյուսը, ինչն էլ նշանակում է, որ չեն կարող մեկնաբանվել համաձայն Գրայսի կարգախոսի /Wierzbicka, 2003: 395-396/:

Վերծրիցկան չի կիսում մաս Լևինսոնի /Levinson, 1983: 124/ այն կարծիքը, որ “Boys will be boys” տիպի նախադասություններն անպայման ճիշտ են: Վերծրիցկան գտնում է, որ այս նախադասությունները ոչ թե փաստ են արտահայտում, այլ՝ որոշակի վերաբերմունք, իսկ վերաբերմունքը չի կարող «ճիշտ» կամ «սխալ» լինել: Եվ քանի որ նշված վերաբերմունքը չի կարելի մեկնաբանել համընդհանուր սկզբունքներով, ապա այն պետք է դիտարկել որպես տվյալ լեզվին հատուկ (language-specific) նշանակություն: Ըստ Քոուլի “Dictionary of Current Idiomatic English” բառարանի, որտեղ մեկնաբանվում են “Boys will be boys” և “Business is business” նույնաբանությունները, առաջին նույնաբանությունը կիրառվում է որպես պատճառաբանություն, մինչդեռ երկրորդը փորձ է անում արդարացնելու ինչ-որ մեկին /Cowie, 1975/: Վերծրիցկայի կարծիքով Գրայսի տեսության կողմնակիցները չեն ցանկանում նկատել այն նուրբ տարբերությունը, որ ընկած է այս երկու կառույցների միջև: Նա գտնում է, որ “Boys will be boys” և նմանատիպ նույնաբանությունները (Students will be students, Wars will be wars, Business will be business) արտահայտում են հանդուրժողական վերաբերմունք, քանի որ will-ով կազմված

կառույցները նշանակում են, որ այդ կառույցներում ներկայացված մարդկանց էությունը հնարավոր չէ զսպել կամ փոխել:

Ենթատեքստը, խոսողի ու խոսակցի հարաբերությունները և արտալեզվական գործոնները շատ կարևոր դեր ունեն նույնաբանությունների մեկնաբանման գործում: Այս միտքը հիմնավորելու համար Վերժբիցկան բերում է քթին քեթև խփելու նշանը, որ ընդունված է մի շարք մշակույթներում, սակայն տարբեր նշանակություններով: Նույն շարժումը տարբեր մշակույթներում մեկնաբանվում է տարբեր կերպ՝ պայմանավորված տվյալ հասարակության մշակութային ու ավանդական նախապաշարումներով: Այսպես և նույնաբանությունները կրում են որոշակի իմաստներ, որոնք հաճախ միմյանցից տարբեր են: Վերժբիցկայի կարծիքով անգլերեն նույնաբանությունները հաճախ սխալ կերպով ընդունվում են որպես համընդհանուր լեզվական միավորներ, որոնք լիովին համապատասխանում են Գրայսի կարգախոսներին, որովհետև դրանք կառուցվածքով պարզ են և առաջին հայացքից նման են տրամաբանական նույնաբանություններին: Կարևոր է նկատել, որ անգլերենի նույնաբանությունները մեծամասամբ կազմված են N is N պարզ կառույցի համաձայն, որը շատ մոտ է p is p տիպի տրամաբանական կառույցներին: Այլ լեզուներ օգտագործում են ավելի բարդ կառույցներ նույնաբանությունների կազմության համար, սակայն սա չի կարելի մեկնաբանել կամ բացատրել անգլերեն նույնաբանությունների ավելի «բնական» և պակաս պայմանական լինելով: Անգլերենը նույնպես ունի տարբեր կաղապարներ, որոնք ունեն տարբեր մեկնաբանություններ: Լևինսոնն առաջ է քաշում նույնաբանությունների մեկնաբանության իր բանաձևը, համաձայն որի, բոլոր նույնաբանություններին հատուկ է խոսակցությունը եզրափակելու հատկություն (a dismissive and topic-closing quality): Այս դեպքում նույնաբանությունը արտաբերվում է «ես այլևս չեմ ցանկանում խոսել այդ մասին» նշանակությամբ: Իհարկե, շատ դեպքերում սա ճիշտ է, օրինակ Enough is enough և That's that, և համապատասխանում է նույնաբանության արտահայտած մտքին, սակայն հազիվ թե կարելի է պնդել, թե բոլոր դեպքերի համար այն կիրառելի է: Հետևյալ նախադասության մեջ նկարագրվում է մի իրավիճակ, երբ աղջնակի կատուն ընկնում է մեքենայի տակ, և անասնաբույժն ասում է նրան “That's that”: Այստեղ, իհարկե, բժիշկը նկատի ունի, որ ամեն ինչ ավարտված է արդեն, սակայն նա ակնհայտորեն չի ցանկանում ասել, թե «ես չեմ ցանկանում այլևս խոսել այս մասին»: Նույն “Boys will be boys” արտահայտությունը նույնպես դժվար թե հնարավոր լինի մեկնաբանել «ես այդ մասին չեմ ցանկանում խոսել»-ու շրջանակներում: Վերժբիցկան առաջարկում է անգլերենի նույնաբանությունների համար հետևյալ բանաձևը՝ «Ոչինչ հնարավոր չէ փոխել» /Wierzbicka, 2003: 441/: Այս դիտանկյունից նույնաբանության կիրառումը ենթադրում է իրավիճակի հետ համակերպվելու առաջարկ, քանի որ այն հնարավոր չէ փոխել: Տվյալ մեկնաբանությունը բավականին լավ կիրառելի է մեծ թվով նույնաբանությունների նկատմամբ, սակայն ոչ բոլորի: Օրինակ՝ Coffee is coffee արտահայտությունը նշանակում է, որ տարբերություն չկա ինչ սուրճ է, այն չի ենթադրում իրավիճակի անփոխելի լինելը:

Այսպիսով Վերժբիցկայի մոտեցման հիմքում ընկած է այն միտքը, որ նույնաբանություններն արտահայտում են հասցեագրողի վերաբերմունքն ինչ-որ երևույթի կամ անձի վերաբերյալ: Այս մոտեցմանը դեմ են հանդես գալիս Ուարդը և Հիրշբերգը: Համաձայն նրանց տեսության խոսակիցներն օգտագործում են նույնաբանություններ՝ փոխանցելու Գրայսի քանակի ընդհանրացված ներակայումները (Gricean generalized quantity implicatures): Այս մոտեցմանը հանդիպում ենք նաև Լևինսոնի մոտ: Այսպիսով հասցեագրողը, նույնաբանություն օգտագործելով, դուրս է գալիս քանակի կարգախոսի շրջանակներից հնարավորություն տալով ենթադրել, որ որոշակի մտքի արտահայտման հնարավոր տարբերակներ մտադրված կերպով չեն ընտրվել խոսքում: Հենց այս այլընտրանքային տարբերակները հասցեագրողը կարող է ընկալել ելնելով արդեն արտաբերված արտահայտությունից: Ասույթի ենթատեքստից կախված գրուցակիցը հասկանում է, թե որ այլընտրանքային արտահայտություններից է հասցեագրողը մտադրված կերպով խուսափել: Բուն ասույթը (the source utterance) որոշակիացնում է բացառվող այլընտրանքային տարբերակների շրջանակը, իսկ ենթատեքստն օգնում է որոշել, թե այս տարբերակներից, որը պետք է հասկանալ որպես հասցեագրողի կողմից բացառվող տարբերակ: Դիտարկենք Ուարդի և Հիրշբերգի օրինակը: Ենթադրենք թե հասցեագրողը իր խոսքում օգտագործել է *War is war* նույնաբանությունը: Հասցեատերը կարող է այն հասկանալ հետևյալ կերպ.

1. Հասցեագրողն արտահայտել է *a is a* ձևի նույնաբանություն, ինչը ոչ մի նոր բան չի ավելացնում մեր ընդհանուր գիտելիքներին ու, հատկապես, ոչ մի նոր տեղեկատվություն չի ավելացնում կոնկրետ *a*-ի մասին:

2. Ելնելով այն դրույթից, որ հասցեատերը հետևում է Համագործակցության սկզբունքին, և համաձայն Քանակի ու Հարաբերության կարգախոսների, նա ասել է այնքան, ինչքան որ ճիշտ է *a*-ի մասին:

3. Հասցեատերը կարող էր մնանատիպ այլ ասույթներ օգտագործել, օրինակ *a is b* (որտեղ “*a*”-ն և “*b*”-ն միմյանցից տարբեր արտահայտություններ են), ինչը կարող էր ինչ որ նոր բան ավելացնել մեր՝ *a*-ի մասին ունեցած գիտելիքներին:

4. Հասցեատերը որոշեց չարտաբերել այսպիսի այլընտրանքային տարբերակներ իր խոսքում:

5. Այսպիսով սա վկայում է, որ այս այլընտրանքային տարբերակները տեղին չեն տվյալ հաղորդակցական գործընթացի համար:

Հասցեագրողի կողմից նույնաբանական ասույթի կիրառման արդյունքում հասցեատերը կարող է ենթադրել, որ *a is a*-ի ցանկացած այլընտրանք, ցանկացած *a is b* (որտեղ *b*-ն ներկայացնում է *a*-ի որոշակի հատկանիշներ կամ *a*-ի կողմից մատնանշված դասին պատկանող անդամների միջև որոշակի տարբերություն կամ *a*-ի նույնականացում այլ երևույթների հետ) տեղին չէ տվյալ հաղորդակցական իրադրությունում: Հասցեագրողը կարող է ցանկանալ փոխանցել հասցեատիրոջը, որ այլընտրանքները տեղին չեն, որովհետև հասցեագրողը դրանք համարում է սխալ կամ էլ դրանք կարևոր չի համարում տվյալ հաղորդակցության համար: Այլընտրանքային տարբերակները ոչ տեղին

համարելը բնորոշ է ցանկացած նույնաբանության /Ward, Hirschberg, 1991: 509/: Գիտարկելով նույնաբանությունների օրինակներ՝ կարելի է նկատել, որ դրանք ունեն որոշակի ընդհանրություններ՝ այն է, ինչպես նշում են Ուարդն ու Հիրշբերգը, նույնաբանությունը որևէ միտք արտահայտելով, միևնույն ժամանակ խոսակցի համար հասկանալի է դարձնում մյուս այլընտրանքային տարբերակների հնարավորությունը: Ուարդը և Հիրշբերգը հակադրվում են Վերծբիցկային, պնդելով, որ եթե անգլերենի որոշ նույնաբանություններ չեն թարգմանվում այլ լեզուներ, ապա դա դեռ բավարար փաստարկ չէ ասելու, թե նույնաբանությունների մեկնաբանությունը սկզբունքորեն անհնար է համաձայն համընդհանրական սկզբունքների (universalist terms): Միևնույն ներակայումը տարբեր լեզուներում կարելի է փոխանցել տարբեր կառուցվածքի նույնաբանություններով: Օրինակ համեմատենք իսպաներեն անշաղկապ որոշիչ երկրորդական նախադասությունը “*El que vale, vale*” անգլերեն պայմանական նախադասության հետ “*If you’ve got it, you’ve got it*”, կամ ֆրանսերեն պայմանական նախադասությունը “*Si je me fâche, je me fâche*” անգլերենի ժամանակի ստորադասական նախադասություն պարունակող բարդ նախադասության հետ “*When I get angry, I get angry*: Այսինքն, նույնիսկ եթե տարբեր լեզուներում նույնաբանությունները ունենում են տարբեր շարահյուսական կառուցվածք, սա չի խոչընդոտում նույնաբանությունների քննությանը ընդհանրական վերլուծությամբ (universalist account): Նույն տեղում Ուարդն ու Հիրշբերգը համաձայնում են Լևինսոնի այն մտքի հետ, որ հասցեագրողը դուրս է գալիս Գրայսի քանակի կարգախոսի շրջանակից և հասկացնել է տալիս հասցեատիրոջը, որ որոշ այլընտրանքային արտահայտություններ միտումնավոր կերպով չեն օգտագործվել: Կախված ենթատեքստից հասցեագրողը հասկանում է, որ այլընտրանքային տարբերակները տվյալ հաղորդակցական իրադրության մեջ անտեղին են: Այսինքն եթե մեկն ասում է «Ֆուտբոլը ֆուտբոլ է», ապա նրա գրուցակիցը պետք է ենթադրի, որ արտահայտություն անողը չի ասում «Ֆուտբոլը բասկետբոլ է» կամ ցանկացած մեկ այլ բան, ասենք «Ֆուտբոլը կյանք է», թեպետ և կարող էր, և այսպիսով չի ավելացնում ոչ մի նոր տեղեկատվություն: Կամ մեկ ուրիշ օրինակում, ասենք «Եթե կռիվ, ապա կռիվ», այլ այլընտրանքային տարբերակները, օրինակ՝ «Եթե կռիվ, ուրեմն թալան» տեղին չեն, քանի որ չեն օգտագործվել խոսողի կողմից: Հենց այլընտրանքային տարբերակների ոչ տեղին լինելն է, որ ընկած է նույնաբանությունների մեկնաբանության հիմքում:

Հաճախ նույնաբանությունները մեկնաբանվել են կամ որպես առանձին դրսևորումներ կամ էլ չափազանց լայն ընդհանրացմամբ: Օրինակ, Լևինսոնը *War is war* նույնաբանությունը մեկնաբանում է, որ պատերազմի ժամանակ միշտ սարսափելի դեպքեր են լինում ու պետք չէ չափից դուրս սզալ այդ առթիվ: Սակայն այս մեկնաբանությունը չի կարելի որպես բանաձև տարածել այլ նույնաբանությունների վրա: Նույնիսկ ավելի ընդհանրական տարբերակով «այդպիսին է բնույթը և ոչինչ հնարավոր չէ փոխել» չի տարածվում շատ նույնաբանությունների վրա: Ֆրագերն առաջ է քաշում այն կարծիքը, որ նույնաբանություն կիրառողը ակնկալում է իր գրուցակցից ճանաչել, որ ինքն

ունի որոշակի տեսակետ գոյական անվան մեջ պարունակվող բոլոր իմաստային բաղադրիչների նկատմամբ, որ ինքը հավատում է, որ գրուցակիցն ընկալում է իր տեսակետը, և որ այս տեսակետը համապատասխանում է տվյալ հաղորդակցական իրադրությանը /Fraser, 1988/: Սակայն այս նույնը ճիշտ է հաղորդակցական իմաստի մեկնաբանման համար նույնպես, և կարծես տարբերակում չի մտցվում նույնաբանության ներակայման (tautological implicature) և հաղորդակցական ներակայման (conversational implicature) միջև: Ուարդի և Հիրշբերգի առաջ քաշած վերլուծության համաձայն *a is a* կառույցի նույնաբանությունների արտահայտած իմաստն այն է, որ *a is b* այլընտրանքային տարբերակը կամ *some a is b* տարբերակը հնարավոր չէ կիրառել տվյալ դեպքում, այսինքն տեղին չէ:

Այսպիսով, ճանաչելով Գրայսի քանակի կարգախոսի հիմնավորվածությունը նույնաբանությունների մեկնաբանման գործում հարկ ենք համարում նշել, որ այն լիարժեք չի կատարում այդ խնդիրը: Ինչպես ցույց է տալիս նյութի վերլուծությունը, ենթատեքստը, խոսողի ու խոսակցի հարաբերությունները և արտալեզվական գործոնները շատ կարևոր դեր ունեն այս հարցում: Մեծ նշանակություն ունի խոսողի վերաբերմունքը խնդրո առարկային: Թեպետ նույնաբանության կոնկրետ նմուշը արտահայտում է միտք, որով բացառում է այլընտրանքային տարբերակների հնարավոր կիրառելիությունը, սակայն սա բավարար բանաձև չէ նույնաբանությունների իմաստի մեկնաբանության գործում: Եթե համեմատենք ասենք «Խաղը խաղ է» նույնաբանությունը նույն կառուցվածքով կազմված «Նպատակապալացությունը նպատակապալացություն է» կառույցի հետ, ապա կտեսնենք, որ երկրորդ արտահայտությունը չի համապատասխանում առաջ քաշված բանաձևին: Ավելին, այն դժվար է պատկերացնել որևէ ենթատեքստի մեջ, թեպետ կառույցով նույնն է: Մրանից բխում է, որ նույնաբանությունները մեկ օրում ստեղծված լեզվական սխեմատիկ կառույցներ չեն, որոնց համար բավական է գտնել մի կառույց կամ մեկնաբանություն և տարածել մնացածի վրա: Կարևոր է, որ նույնաբանությունը կիրառելիություն ունենա լեզվի մեջ, ընդունված լինի այն կրող հասարակության կողմիցու հասկանալի լինի նրան: Նույնաբանությունն էլ, բառի պես ունի պայմանական նշանակություն: Ինչպես «սեղան» բառը արտահայտում է որոշակի իմաստ, նույն կերպ էլ նույնաբանությունն ունի իմաստ, որը հաճախ տարբեր է նույնաբանության կառույցի մեջ մտնող բաղադրիչ բառերի առանձին իմաստներից: Հետևաբար նույնաբանությունը որոշակի իմաստ ձեռք է բերում կոնկրետ հասարակության մեջ, որն էլ օժտում է նրան այդ իմաստով: Ինչպես ճիշտ նկատում է Վերժբիցկան որոշ նույնաբանություններ կիրառելի են տարբեր մշակույթների ու լեզուների մեջ, որոշ նույնաբանություններ ունեն իմաստային մեծ կամ փոքր տարբերություններ, իսկ մի մասն էլ անընկալելի ու անթարգմանելի են: Սա թերևս կարելի է բացատրել լեզվամշակութային փոխգործության ու մշակութային առանձնահատկության միաժամանակյա ազդեցությամբ: Լեզվական կառույցը լեզուների շփման արդյունքում անցնում է մի լեզվական հասարակությունից մյուսին, միևնույն ժամանակ հարմարեցվելով տեղական մտածելակերպին և տեղայնացվելով: Իսկ այն նույնաբանություն-

ները, որոնք ընկալելի են տվյալ հասարակությանը բնորոշ մտածելակերպային առանձնահատկության շնորհիվ և կապված են տվյալ հասարակության պատմության ու մշակույթի սինթեզում ձևավորված աշխարհայացքի հետ, անփոխանցելի են այլ հասարակություն կամ մշակույթ, որը չի կիսում նույն աշխարհայացքային առանձնահատկությունները:

Այսպիսով, կարելի է փաստել, որ ցանկացած նույնաբանական կառույց կրում է տվյալ լեզվամտածողության և մշակույթի դրոշմը, այն ունի տվյալ լեզվին ներհատուկ նշանակություն ու գործառույթ և ոչ միշտ է անցնում մի լեզվից ու մշակույթից մյուսը: Մյուս կողմից տվյալ հաղորդակցական իրավիճակի շրջանակներում նույնաբանական կառույցի կիրառումը խոսողի/գրողի կողմից ենթադրում է Գրայսի քանակի կարգախոսի միտումնավոր խախտում, և հետևաբար այդ կառույցի ընտրությունը տվյալ խոսքային իրադրությունում պատահական չէ և ունի տեքստակազմիչ նշանակություն: Այն մշտապես հիմնավորված է և պայմանավորված խոսողի/գրողի հաղորդակցական մտադրությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Cowie A.P., Mackin R. Oxford dictionary of current idiomatic English, Volume I: Verbs with prepositions and particles. London: Oxford University Press, 1975.
2. Fraser B. Motor oil is motor oil: An account of English nominal tautologies // *Journal of Pragmatics*, vol. 12, 1988.
3. Grice H.P. Logic and conversation // P. Cole and J.L. Morgan (eds.) *Syntax and Semantics*, vol. 3: Speech acts. New York: Academic Press, 1975.
4. Grice H.P. *Studies in the Way of Words*. Harvard: Harvard University Press, 1989.
5. Kalish D., Montague R. *Logic: Techniques of Formal Reasoning*. Harcourt, Brace, and Jovanovich. 1964.
6. Levinson S.C. *Pragmatics*. Cambridge: Cambridge University Press, 1983.
7. Ward G.L., Hirshchberg J. A pragmatic analysis of tautological utterances // *Journal of Pragmatics*, vol. 15. North Holland, 1991.
8. Wierzbicka A. Boys will be boys: “Radical semantics” vs “radical pragmatics” // *Language*, 63, 1987.
9. Wierzbicka A. *Cross-cultural Pragmatics: The Semantics of Human Interaction*. New York: Mouton de Gruyter, 2003.

А. ЧУБАРИН, А. МЕСРОПЯН – К вопросу интерпретации тавтологических конструкций в английском языке. – Семантический синтаксис, исходящий из положения об отобразительной функции синтаксических форм, предполагает, что всякая синтаксическая структура призвана описывать прежде всего определенный тип отношений действительности и, напротив, каждый тип отношений действительности находит свое предпочтительное выражение в определенной синтаксической структуре. Тавтологические структуры в этом плане

не являются исключением. В данной статье тавтологические конструкции рассматриваются в ключе современных лингвистических теорий, что в свою очередь способствует выявлению особенностей их функционирования и определению их роли в передаче коммуникативной интенции в данной речевой ситуации.

Ключевые слова: тавтология, коммуникативная импликатура, принцип кооперации, максима количества, коммуникативная ситуация

A. CHUBARYAN, A. MESROPYAN – *On Interpretation of Tautological Constructions in Modern English.* – Semantic syntax is based on the notion that any syntactic structure is primarily designed to describe a certain type of relation in reality and each type of relationship in reality finds its preferred expression in a particular syntactic structure. Tautologies are no exception in this respect. The present paper aims at their analysis in line with contemporary linguistic theories, which makes it possible to reveal the peculiarities of their functioning in discourse and to define their role in transferring the speaker's/writer's communicative intention in the given speech situation.

Key words: tautology, conversational implicature, Cooperative Principle, Maxim of Quantity, communicative situation